Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-415-25.12.2008-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ- 297 օրենքի (այսուհետ օրենք) 37-րդ հոդվածի 4-րդ կետից հանել <<և պետական հավատարմագրումը>> բառերը:

Հոդված 2. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում <<և ժամկետները>> բառերը փոխարինել <<և հավատարմագրի գործողության ժամկետները>> բառերով:
2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<3. անկախ մասնագիտական ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից՝ պետական հավատարմագրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով>>:

3) 4-րդ մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<7. Ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ կրթական ծրագրերի>>:

Հոդված 3. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<1. Ուսումնական հաստատությունների լիցենզավորման համար եզրակացություն տալու նպատակով՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմինն ստեղծում է լիցենզավորման ծառայություն>> :

2) հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կտերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3
1.ՀՀ կառավարություն	1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի կապակցությամբ հայտնում ենք, որ Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի տեքստի իմաստային ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է հանել միայն «և հավատարմագրման» բառերը: 2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն՝ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում տրվում է իրավական ակտի լրիվ անվանումը, իսկ նույն օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս	Առաջարկություններն ընդունվել են, նախագծերը լրամշակվել են:

	հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը (այսուհետ՝ ընդունման օր), թիվը և «օրենք» բառը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածին:	